Երևանի պետական համալսարանում գործող
Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի (ԲԿԳԿ)
իրավագիտության 001 մասնագիտական խորհրդին
հասցե՝ ՀՀ 0025, Երևան, Ալեք Մանուկյան փողոց, թիվ 1

ԿԱՐԾԻՔ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ՝ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒ, ԴՈՑԵՆՏ ԳՐԻԳՈՐ ԲԵՔՄԵՋՅԱՆԻ

ԺԲ.00.03 - Մասնավոր իրավունք (քաղաքացիական, առևտրային (կոմերցիոն), միջազգային մասնավոր, ընտանեկան, աշխատանքային, սոցիալական ապահովության իրավունք) մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան հայցելու համար ներկայացված՝ Եվա Գագիկի Սաղոյանի «Զբոսաշրջային ծառայությունների մատուցման պայմանագրի իրավական կարգավորումը Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսդրությամբ» թեմայով ատենախոսության վերաբերյալ

Ատենախոսությունը նվիրված է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսդրությամբ զբոսաշրջային ծառայությունների մատուցման պայմանագրի իրավական կարգավորման հիմնախնդիրների ուսումնասիրությանը:

Վերջին տարիներին Հայաստանի Հանրապետությունում զբոսաշրջության ոլորտի արագընթաց զարգացումը և քաղաքացիների ճանապարհորդությունների կազմակերպման հետ կապված ծառայությունների լայն տարածումն արդիական են դարձրել ոլորտում ծագող իրավահարաբերությունների համապարփակ կարգավորման անհրաժեշտությունը:

Թեև ՀՀ քաղաքացիական օրենսգիրքն ընդհանուր հիմունքներով կարգավորում է ծառայությունների մատուցման պայմանագրային հարաբերությունները, սակայն այդ նորմերն օբյեկտիվորեն չեն կարող ապահովել զբոսաշրջային ծառայությունների

մատուցման կապակցությամբ առաջացող բազմաշերտ իրավահարաբերությունների ամբողջական կանոնակարգումը:

Զբոսաշրջային ծառայությունների մատուցման պայմանագրի կողմերի իրավական կարգավիճակի ասիմետրիան, զբոսաշրջիկին մատուցվող ծառայությունների համալիր բնույթը, արտագնա զբոսաշրջության դեպքում նաև՝ օտարերկրյա տարրի ներգրավվածությունը զգալիորեն բարդացնում են սպառողների իրավունքների իրացման և պաշտպանության գործընթացը: Այդ խնդիրների առկայությունը հաստատվում է ինչպես իրավակիրառ, այնպես էլ դատական պրակտիկայում ձևավորված ոչ միատեսակ, երբեմն՝ հակասական մոտեցումներով:

Նման պայմաններում ոլորտի առանձնահատկություններին համարժեք և սպառողների շահերի պաշտպանության բարձր մակարդակ ապահովող հատուկ իրավական կարգավորման ու ինստիտուցիոնալ կառուցակարգերի ներդրումն օբյեկտիվ անհրաժեշտություն է: Պատահական չէ, որ վերջին տասնամյակներում զբոսաշրջության ոլորտը միջազգային, հատկապես եվրոպական իրավունքում իրավաստեղծ գործունեության առաջնահերթ ուղղություններից մեկն է:

Այս գործընթացից անմասն չէ նաև Հայաստանի Հանրապետությունը: Սպառողների պաշտպանության միջազգային չափանիշներին համապատասխանելու և զբոսաշրջության ոլորտի արդիական կարգավորման հրամայականով պայմանավորված՝ 2023 թվականին ընդունվել է «Զբոսաշրջության մասին» ՀՀ նոր օրենքը, որով նախատեսվել են ոլորտի կարգավորման սկզբունքորեն նոր մոտեցումներ:

Նշվածի հաշվառմամբ՝ առկա է նոր օրենսդրական կարգավորումների լույսի ներքո զբոսաշրջային ծառայությունների մատուցման պայմանագրի իրավական բնույթը և տարրերը, դրա փոփոխման և լուծման, ինչպես նաև զբոսաշրջային գործունեության սուբյեկտների քաղաքացիական պատասխանատվության առանձնահատկությունները համալիր ուսումնասիրելու անհրաժեշտություն, ինչն էլ վկայում է ընտրված թեմայի արդիականության մասին:

Կատարված ուսումնասիրության արդիականության մասին է փաստում նաև այն, որ զբոսաշրջային ծառայությունների մատուցման ինստիտուտին առնչվող

հիմնախնդիրներին հայրենական իրավագիտության մեջ համալիր անդրադարձ չի կատարվել, իսկ արտասահմանյան գրականության մեջ զբոսաշրջության ոլորտի պայմանագրային հարաբերությունների հիմնախնդիրները լուսաբանվում են այդ երկրների օրենսդրական կարգավորումների համատեքստում, որոնք էապես տարբերվում են ներպետական օրենսդրությամբ նախատեսված կարգավորումներից: Հետևաբար, թե՛ նախկին, թե՛ նոր հայրենական զբոսաշրջային օրենքներով ամրագրված կարգավորումները տեսական մակարդակով երբևէ քննարկման առարկա չեն դարձվել:

Այս առումով ատենախոսության շրջանակներում կատարված տեսական ուսումնասիրությունները, վեր հանված հիմնախնդիրների վերաբերյալ հեղինակի կողմից ներկայացված հայեցակարգային լուծումները նաև գիտական և գործնական արժեք են ներկայացնում, իսկ կատարված օրենսդրական փոփոխությունների առաջարկները կարող են կարևոր նշանակություն ունենալ իրավական դաշտի հետագա կատարելագործման համար:

Հեղինակը կատարել է խորը և համապարփակ հետազոտություն, ուսումնասիրել է թեմային վերաբերող մեծածավալ մասնագիտական գրականություն, վերլուծել է թեմային առնչվող ինչպես հայրենական, այնպես էլ օտարերկրյա օրենսդրությունն ու դատական պրակտիկան՝ հիմնվելով նաև ոլորտին վերաբերելի միջազգային իրավական փաստաթղթերով ամրագրված սկզբունքների վրա:

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, տասը պարագրաֆներից, եզրակացությունից, ինչպես նաև օգտագործված իրավական ակտերի, գրականության և պրակտիկայի նյութերի ցանկից:

Ներածությունում հիմնավորվել է թեմայի արդիականությունը, ներկայացվել են հետազոտության նպատակը և խնդիրները, օբյեկտը և առարկան, ընդհանուր մեթոդաբանությունը, գիտական նորույթը, պաշտպանության ներկայացվող դրույթները, տեսական և գործնական նշանակությունը, հետազոտության արդյունքների փորձարկումը և աշխատանքի կառուցվածքը:

«Զբոսաշրջային ծառայությունների մատուցման պայմանագրի ընդհանուր բնութագիրը» վերտառությամբ 1-ին գլխում հեղինակն անդրադարձել է զբոսաշրջային

ծառայությունների մատուցման պայմանագրի իրավական բնույթի հետ կապված վիճելի հարցերին, վերջինիս և ոլորտային օրենքով նախատեսված զբոսաշրջային փաթեթի պայմանագրի հարաբերակցության հիմնախնդրին, զբոսաշրջային գործունեության սուբյեկտների և զբոսաշրջային ծառայությունները սպառողների միջև կնքվող պայմանագրի առարկայի առանձնահատկություններին՝ առաջարկելով պայմանագրի նոր իրավական բնորոշում:

«Զբոսաշրջային ծառայությունների մատուցման պայմանագրի կողմերը և բովանդակությունը» վերտառությամբ 2-րդ գլխում հեղինակը քննարկել է զբոսաշրջիկի իրավական կարգավիճակի որոշ հիմնահարցեր, զբոսաշրջային գործունեության սուբյեկտին ներկայացվող օրենսդրական պահանջները, մանրամասն վերլուծել վերջինիս պատասխանատվության ֆինանսական ապահովման առկա կառուցակարգի թերություններն ու բացերը, հետազոտել զբոսաշրջային փաթեթի պայմանագրի պարտադիր դրույթների շրջանակը՝ հանդես գալով օրենսդրական փոփոխությունների առաջարկներով:

«Զբոսաշրջային ծառայությունների մատուցման պայմանագրի փոփոխման և լուծման առանձնահատկությունները: Զբոսաշրջային գործունեության սուբյեկտների պատասխանատվությունը» վերտառությամբ 3-րդ գլխում անդրադարձ է կատարվել քննարկվող պայմանագրի փոփոխման և լուծման ընթացակարգին, ինչպես նաև պայմանագրի լուծման հիմքերին: Կատարված ուսումնասիրության արդյունքում հեղինակն առաջարկել է սահմանել զբոսաշրջային պայմանագրի փոփոխման և լուծման արտադատական կարգ, ներկայացրել պայմանագրի լուծման հիմքերի և իրավական հետևանքի օրենսդրական ձևակերպումներ:

Նույն գլխի շրջանակներում հեղինակն արժեքավոր եզրակացություններ և առաջարկություններ է ներկայացրել զբոսաշրջային գործունեության սուբյեկտների քաղաքացիական պատասխանատվության, մասնավորապես՝ զբոսաշրջային փաթեթում ընդգրկված զբոսաշրջային ծառայությունների մատուցման համար պատասխանատվության պատշաճ սուբյեկտի, օդային փոխադրումների դեպքում պատասխանատվության առանձնահատկությունների, զբոսաշրջային օպերատորի և գործակալի պատասխանատվության հարաբերակցության, ինչպես նաև զբոսաշրջային

գործունեության սուբյեկտների պատասխանատվությունը բացառող հանգամանքների վերաբերյալ:

Ատենախոսությունն ունի հստակ տրամաբանական կառուցվածք, անհրաժեշտ հարցադրումների վերլուծություն, համապատասխան եզրահանգումներ: Աշխատանքը գրված է պատշաճ գիտական լեզվով, բացակայում են լեզվական և քերականական կանոնների շեղումներ:

Սեղմագրի և ատենախոսության ուսումնասիրությունն ու համադրումը վկայում են, որ պաշտպանության ներկայացված դրույթներն ու ատենախոսության հիմնական եզրահանգումներն արտացոլված են հեղինակի կողմից մշակված սեղմագրում:

Ատենախոսության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հեղինակը դրսևորել է ինքնուրույն հետազոտություն կատարելու և հնարավորինս նորույթ հանդիսացող դատողություններ անելու անհրաժեշտ ունակություն: Բացի այդ, ատենախոսությունում ակներև է հեղինակի պատշաճ իրազեկվածությունը քննարկվող նյութին առնչվող տեսական աղբյուրների, գիտական տեսակետների, պրակտիկ նյութերի ու միջազգային փորձի վերաբերյալ:

Ատենախոսության կառուցվածքը, ծավալը և ձևավորումը համապատասխանում են ԲԿԳԿ-ի կողմից սահմանված պահանջներին: Այդուհանդերձ, կարծում ենք՝ ատենախոսությունը զերծ չէ որոշ թերություններից, որոնց վրա ցանկանում ենք հրավիրել ատենախոսի ուշադրությունը: Այսպես՝

1. Պաշտպանության ներկայացվող 3-րդ դրույթում հեղինակը նշում է, որ «Զբոսաշրջության մասին» ՀՀ օրենքով նախատեսված զբոսաշրջային փաթեթի պայմանագրի պարտադիր պայմանների մի մասն ունեն սոսկ տեղեկատվական բնույթ և չեն համապատասխանում էական պայման լինելուն բնորոշ հիմնական չափանիշին, այն է՝ կողմերի միջև համաձայնեցումը: Ըստ հեղինակի՝ այդ խումբ պայմանները կարող են պարտադիր համարվել պայմանագրում ներառվելու տեսանկյունից, բայց դրանց բացակայությունն ինքնին չի կարող հանգեցնել պայմանագրի չկնքվածության: Ուստի առաջարկվում է զբոսաշրջային պայմանագրի պայմանները դասակարգել երկու խմբում. կողմերի միջև համաձայնեցման ենթակա էական պայմաններ և կողմերի միջև համաձայնեցում չենթադրող պայմանագրի պարտադիր պայմաններ:

Ընդունելի համարելով հեղինակի այն պնդումը, որ կողմերի միջև համաձայնեցման ենթակա և համաձայնեցում չպահանջող, տեղեկատվական նշանակություն ունեցող պայմանները պայմանագրի կնքվածության տեսանկյունից չեն կարող առաջացնել միևնույն իրավական հետևանքը՝ այնուամենայնիվ, կարծում ենք՝ հեղինակի կողմից առաջարկվող դասակարգումը համահունչ չէ պայմանագրի էական պայմանների սահմանման հիմքում ընկած՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի ընդհանուր տրամաբանությանը:

Մասնավորապես, հեղինակի առաջարկը հիմնվում է այն կանխավարկածի վրա, որ «էական պայման» հասկացությունը պետք է կապվի բացառապես կողմերի միջև համաձայնեցման անհրաժեշտության հետ, մինչդեռ քաղաքացիական օրենսդրության համակարգային վերլուծությունը վկայում է, որ «էական պայման» և «պարտադիր պայման» հասկացությունները միշտ չէ, որ տարանջատվում են հեղինակի առաջարկած տրամաբանությամբ: Օրինակ՝ Օրենսգրքի 998-րդ հոդվածի 1-ին մասում թվարկված են ապահովագրության պայմանագրի էական պայմանները, իսկ 2-րդ մասում՝ այն պայմանները, որոնք պետք է նշվեն այդ պայմանագրում: Ընդ որում՝ վերջիններիս թվում են ապահովագրական գումարի չափը, ապահովագրական պատահարը կամ իրադարձությունը, որի տեղի ունենալու դեպքում տրվում է ապահովագրական հատուցումը, ապահովագրական պատահարի տեղի ունենալու մասին ապահովադրի և (կամ) շահառուի կողմից ապահովագրողին տեղեկացնելու կարգը և ժամկետները, որոնք, բնականաբար, կողմերի միջև համաձայնեցման ենթակա պայմաններ են:

2. Աշխատանքի 3.2-րդ պարագրաֆում քննարկելով զբոսաշրջային փաթեթում ընդգրկված զբոսաշրջային ծառայությունների համար պատասխանատվության սուբյեկտի՝ միջազգային պրակտիկայում գոյություն ունեցող մոդելները՝ հեղինակը գալիս է այն եզրահանգման, որ որպես սպառողների իրավունքների պաշտպանությունն ապահովող և կողմերի պայմանագրային հարաբերության էությանն առավել համապատասխանող պատասխանատվության կառուցակարգ անհրաժեշտ է կիրառել զբոսաշրջային փաթեթում ընդգրկված զբոսաշրջային ծառայությունների մատուցման համար զբոսաշրջային գործունեության սուբյեկտների պատասխանատվությունը: Ընդ որում, այս եզրահանգման հիմքում ընկած է

զբոսաշրջային փաթեթներ ձևավորելու կապակցությամբ զբոսաշրջային գործունեության սուբյեկտների և հյուրանոցային տնտեսության օբյեկտների միջև ծագող տարաբնույթ պայմանագրային հարաբերությունների խորը վերլուծությունը:

Միաժամանակ աշխատանքի 3.3-րդ պարագրաֆում օդային փոխադրումների օրինակով քննարկելով փոխադրման համար պատասխանատվության առանձնահատկությունները՝ հեղինակն առաջարկում է այդ ծառայության համար զբոսաշրջային գործունեության սուբյեկտների պատասխանատվության կանոնից նախատեսել բացառություն՝ փոխադրման համար վերջիններիս պատասխանատվությունը սահմանափակելով բացառապես կազմակերպչական գործողությունների համար պատասխանատվությամբ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ զբոսաշրջային փաթեթում հյուրանոցային և օդային փոխադրման ծառայություններից բացի կարող են ընդգրկվել նաև այլ զբոսաշրջային ծառայություններ՝ կարծում ենք՝ աշխատանքն ավելի կշահեր, իսկ պատասխանատվության առաջարկվող մեխանիզմն առավել համապարփակ կլիներ, եթե անդրադարձ կատարվեր նաև այլ զբոսաշրջային ծառայությունների, այդ թվում՝ ներքին և ներգնա զբոսաշրջության շրջանակներում ուղևորափոխադրման համար պատասխանատվության առանձնահատկություններին:

3. Պաշտպանության ներկայացվող 7-րդ դրույթում զբոսաշրջային ծառայությունների մատուցման պարտավորության կողմերի շահերը հավասարակշռելու նպատակով հեղինակն առաջարկում է նախատեսել զբոսաշրջային գործունեության սուբյեկտների պատասխանատվությունը բացառող հատուկ հիմքեր, որոնք են՝ սպառողին վերաբերելի, այսինքն՝ ինչպես վերջինիս մեղքով, այնպես էլ նրա անձի հետ կապված և նրա վերահսկողությունից դուրս գտնվող օբյեկտիվ հանգամանքների հետևանքով պարտավորությունը խախտելը, ինչպես նաև զբոսաշրջային փաթեթում ընդգրկված զբոսաշրջային ծառայությունները մատուցելու պայմանագրային պարտավորությունից չբխող գործողությունների (անգործության) արդյունքում սպառողին արտապայմանագրային վնաս պատճառելը:

Հեղինակն արդարացիորեն ելնում է այն գաղափարից, որ զբոսաշրջային գործունեության սուբյեկտը չպետք է պատասխանատվություն կրի այն դեպքերի

համար, որոնք փաստացի դուրս են նրա վերահսկողությունից: Միևնույն ժամանակ կարծում ենք՝ «սպառողին վերաբերելի հանգամանք» կատեգորիան անորոշ է և կարող է գործնականում առաջացնել մեկնաբանման և կիրառման խնդիրներ:

Թեև հեղինակը փորձ է կատարում հստակեցնել առաջարկվող հասկացությունը՝ այն կապելով սպառողի մեղքի, ինչպես նաև վերջինիս անձի հետ կապված և նրա վերահսկողությունից դուրս գտնվող օբյեկտիվ հանգամանքների հետ, այնուամենայնիվ, այդ հստակեցումը նույնպես չի ապահովում բավարար իրավական որոշակիություն:

Բանն այն է, որ «սպառողի անձի հետ կապված և նրա վերահսկողությունից դուրս գտնվող օբյեկտիվ հանգամանքներ» ձևակերպումը կարող է ներառել տարաբնույթ իրավիճակներ, օրինակ՝ սպառողի առողջական խնդիրներ, անձնագրային փաստաթղթերի հետ կապված խոչընդոտներ, վիզայի մերժում, սահմանահատման սահմանափակումներ և այլն: Ընդ որում, մի շարք դեպքերում այդ հանգամանքները կարող են կանխատեսելի լինել զբոսաշրջային գործունեության սուբյեկտի համար, իսկ որոշ դեպքերում անգամ՝ կախված լինել վերջինից: Ուստի զբոսաշրջային գործունեության սուբյեկտներին պատասխանատվությունից ազատելու առաջարկվող հիմքի տարածական մեկնաբանման ռիսկը բացառելու նպատակով նպատակահարմար կլիներ հստակեցնել սպառողի անձի հետ կապված օբյեկտիվ հանգամանքները գնահատելու չափանիշները:

Ատենախոսական աշխատանքի կապակցությամբ արտահայտված վերոնշյալ նկատառումները, սակայն, կրում են խորհրդատվական բնույթ և չեն նսեմացնում ատենախոսության գիտական արժանիքները:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում եմ, որ Եվա Գագիկի Սաղոյանի կողմից իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման՝ «Զբոսաշրջային ծառայությունների մատուցման պայմանագրի իրավական կարգավորումը Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսդրությամբ» վերտառությամբ թեկնածուական ատենախոսությունը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության կառավարության 08.08.1997թ.-ի թիվ 327 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման

կանոնակարգի» կետ 7-ի պահանջներին, և հեղինակն արժանի է ԺԲ.00.03 «Մասնավոր իրավունք (քաղաքացիական, առևտրային (կոմերցիոն), միջազգային մասնավոր, ընտանեկան, աշխատանքային, սոցիալական ապահովության իրավունք)» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Իրավաբանական գիտությունների
թեկնածու, դոցենտ՝

Գ. ԲԵՔՄԵԶՅԱՆ

05.06.2026թ.

«Գ. Բեքմեզյանի ստորագրության իսկությունը հաստատում եմ»

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի դեկանի տեղակալ՝

Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ